# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 281-Ա

«ԱՍՏՂԻԿ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ
ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը՝

1. Բարեգործական որակել Նիդերլանդների Թագավորության «Մենսենքինդերեն» բարեգործական հիմնադրամի կողմից «Աստղիկ» բարեգործական հիմնադրամի հասցեով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ խոշորացված համայնքի գյուղատնտեսության զարգացմանն աջակցելու և անհատույց բաշխելու նպատակով ուղարկված ապրանքների (20,074.80 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 9,500 եվրո փոխադրման ծախսերը, ցանկը՝ համաձայն N 1 հավելվածի, մաքսային ձևակերպումները կատարվելու են Երևանի մաքսային սպասարկման կենտրոն-մաքսատուն, վարչությունում) և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի Վահագնի բնակավայրում սահմանափակ կարողություններով երեխաների ու երիտասարդների վերականգնողական, կրթական և ուսուցողական կենտրոնի ստեղծման և անհատույց բաշխման նպատակով ուղարկված ապրանքների (40,751.24 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 19,000 եվրո փոխադրման ծախսերը, ցանկը՝ համաձայն N 2 հավելվածի,

մաքսային ձևակերպումները կատարվելու են Երևանի մաքսային սպասարկման կենտրոն-մաքսատուն, վարչությունում) ներմուծման ծրագիրը:

2. «Աստղիկ» բարեգործական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

19.04.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ